ՊԵՏՈՒԹՅԱՆԿԱՐԻՔՆԵՐԻՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐՈ ԳՀԱՊՁԲ-20-9/34-1

ք. Երևան 04 -ը սեպտեմբերի 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա(այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և **«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրենԱ. **Դիլանյանի**, ով գործում է Ընկերությանկանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողըպարտավորվումէսույնպայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանվածկարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդինմատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝Տեխնիկականբնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկԳնորդըպարտավորվումէընդունել ապրանքըևվճարելդրահամար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***24,900,000 (քսանչորս միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ:***Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 10.12.2020թ.:***

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Ձեռքբերվող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում,

հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների գործերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 ՊայմանագիրնուժիմեջէմտնումԿողմերիստորագրմանպահից և գործում է մինչևկողմերի՝ պայմանագրովստանձնածպարտավորություններիողջծավալովկատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում էպայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը

չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀպաշտպանությանանախարարություն	«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ
Ք. ԵրևանԲագրևանդի5	Ք. Երևան, Մարգարյան 37, բնակարան 131
ՀՀՖՆԱ գործառնականվարչություն	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011006492	Հ/Հ 1930048363450100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 02621803
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-9/34-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Գնման ենթակա ապրանքի անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Ֆիրմային անվանումը	Ապրանքային նշանը	Մակնիշը	Արտադրողի անվանումը
1.	Նյարդավիրաբուժության համար նախատեսված էլեկտրական ուժային ունիվերսալ սարքավորման հավաքածու	Նյարդավիրաբուժության համար նախատեսված բարձր արագությամբ էլեկտրական ուժային ունիվերսալ սարքավորման, ծակման և տաշման ծայրակալների ու ծայրադիրների, անվտանգ գանգահատման և գանգածակման ծայրակալների ու ծայրադիրների, սարքավորման խնամքի համար նախատեսված պարագաների հավաքածու, որն իր մեջ ներառում է՝ 1.Բարձր արագության Էլեկտրական ուժային սարքավորման համար նախատեսված բազային մոդուլ - 1 հատ, 2.Բարձր արագության շարժիչ բռնակում - 1 հատ, 3. Պտտման, ռեվերսի, արագության անընդմեջ կարգավորման ձեռքի կարգավորիչ - 1 հատ, 4. Շարժիչը կառավարման վահանակին միացնող մալուխ - 1 հատ, 5. Կառավարման համար նախատեսված ոտնակ: 6. Ոտնակը սնուցման աղբյուրին միացնող մալուխ - 1 հատ, 7. Մալուխի միացման հատվածների պաշտպանիչ մեխանիզմ - 2 հատ, 8. Ծայրակալների արագ փոխման համար նախատեսված գործիք - 1 հատ, 9. Բարձր արագության ուժային սարքավորման համար նախատեսված բիոհամատեղելի քսայուղ - 3 հատ, 10. Բարձր արագության ուժային սարքավորման համար նախատեսված խնամքի հավաքածու - 3 հատ, 11. Բարձր արագության ուժային արքավորման խնամքի համար նախատեսված սարքավորում - 1 հատ, 12. Սարքավորման շարժիչի, մալուխների, ծայրակալների և ծայրադիրների պահպանման և ախտահանման համար նախատեսված արկղ - 1 հատ, 13. Բորի համար նախատեսված ուղիղ ծայրադիր - 1 հատ, 14. Բորի համար նախատեսված անկյունային ծայրադիր - 1 հատ, 15. Կլոր բորեր տարբեր տրամաչափի - 29 հատ, 16. Ձվաձև գլխիկով բորեր տարբեր տրամաչափի - 4 հատ, 17. Գմբեթաձև գլխիկով բորեր - 1 հատ, 18. Կոնաձև գլխիկով բորեր - 1 հատ, 19. Գանգահատման ծայրադիր իր կցորդիչով - 1 հատ, 20. Գանգահատման ծայրադիրի կտրող ստերիլ բորեր - 5 հատ, 21. Գանգածակիչ, ծայրակալով և բորի պաշտպանիչով - 1 հատ 22. Գանգածակիչի ծակիչ բորեր – 3 հատ: 1.Բարձր արագության Էլեկտրական ուժային սարքավորման համար նախատեսված բազային մոդուլ: Իրենից ներկայացնում է սնուցման և կառավարման աղբյուր, նախատեսված նյարդավիրաբուժության մեջ օգտագործման համար: Ունի միացման և անջատման տվիչ, արագության կառավարման սահող կարգավորիչ: Ունի 3 միացման կետ՝մեկը 60 վտ հզորությամբ շարժիչ բռնակի միացման համար, մյուսը ոտքով կառավարման ոտնակի համար, մյուսը՝ անհրաժեշտության դեպքում ավելի մեծ հզորության Կոլիբրի շարժիչի միացման համար: Չափերը, երկարությունը՝245 մմ, լայնությունը 170 մմ,	DePuy Synthes EPD (ELECTRIC PEN DRIVE)	DePuy Synthes	DePuy Synthes EPD (ELECTRIC PEN DRIVE)	Johnson & Johnson

		բարձրությունը՝118 մմ: Պաշտպանության աստիճանը - IP XO: Շահագործումը հնարավոր է 10-35 աստիճան ցելսյուսի պայմաններում, օդի հարաբերական խոնավությունը՝ 90%: Էլեկտրասնուցումը ստանդարտ 220 Վ ± 10%; 50 Հց. ցանցից, հոսանքի ուժը 0,7A- 2,0A: (1 հատ) 2.Բարձր արագության շարժիչ բռնակում: Շարժիչի տեսակը՝Էլեկտրական, սպասարկվող, բարձր արագության, առանց ռեդուկտորի: Ենթակա է ախտահանման: Խոնավությունից պաշտպանվածությունը՝ IP 54: Պտտող մոմենտը արագ միացման ծայրակալով շաղափման ռեժիմում՝ 0.5ՆՄ: Ունի պտտման արագության սահուն կարգավորում 0–60 000 պ/րոպե անմիջապես շարժիչ բռնակի վրայից: Ծայրակալների փոխումը կատարվում է առանց լրացուցիչ գործիքների: Անմիջապես բռնակի վրայից հնարավոր է միացնել հետադարձ ռեժիմը ակնթարթորեն, առանց ռոտորի աշխատանքը դադարեցնելու: Ելքային հզորությունը 60վտ: Հնարավոր է տարբեր դիքերով ֆիքսել ծայրակալը 8 դիրքում: Աղմուկի մակարդակը՝ 58ԴԲ-ից ոչ ավելի: Վիբրացիայի մակարդակը՝ 2.5 մ/վ-ից ոչ ավելի:Առանց ծայրադիրների առավելագուն քաշը 185գ, երկարությունը՝130մմ, տրամագիծը՝21մմ: (1 հատ) 3. Պտտման, ռեվերսի, արագության անընդմեջ կարգավորման ձեռքի կարգավորիչ՝ կարգավորիչը տեղակայվում է անմիջապես շարժիչի վրա եւ ամբողջովին համատեղելի է շարժիչի հետ: Հնարավոր է մատի ճնշմամբ անհատական կարգավորում, հնարավոր է արգելափակել: Աշխատանքի տիպը՝ էլեկտրոմագնիսական, քաշը՝ 20գ: (1հատ) 4. Շարժիչը կառավարման վահանակին միացնող մալուխ: Բարձր արագության շարժիչի և սնուցման վահանակի միացման ճկուն 3 մ երկարությամբ մալուխ՝ երկու ծայրում ավտոփականներով: Ենթակա է ավտոկլավի միջոցով ախտահանման: Ամբողջովին համատեղելի է կառավարման վահանակի և բռնակ շարժիչի հետ:(1 հատ) 5. Կառավարման համար նախատեսված ոտնակ: Ամբողջովին համատեղելի է սնուցման համակարգի և բռնակ շարժիչի հետ, ծառայում է ոտքի միջոցով սարքի միացման և արագության կառավարման նպատակին - 1հատ: 6. Ոտնակը սնուցման աղբյուրին միացնող մալուխ, համատասխան է ոտնակին և սնուցման աղբյուրին 4 մ երկարությամբ:(1 հատ) 7. Մալուխի միացման հատվածների պաշտպանիչ մեխանիզմ, համապատասխանում է մալուխի միացման մեխանիզմին, պատրաստված է չժանգոտվող պողպատից: (2 հատ) 8. Ծայրակալների արագ փոխման համար նախատեսված գործիք: (1 հատ) 9. Բարձր արագության ուժային սարքավորման համար նախատեսված բիոհամատեղելի քսայուղ, Առաքվում է 40մլ տարաներով, օգտագործման համար հարմար լինելու նպատակով, ունի նաեւ ասեղ կափարիչ վրա օգտագործումը հեշտացնելու նպատակով: (3 հատ) 10. Բարձր արագության ուժային սարքավորման համար նախատեսված խնամքի հավաքածու, որն իր մեջ ներառում է բիոհամատեղելի քսայուղ նախատեսված ավտոմատ յուղման և խնամքի սարքավորման հետ աշխատանքի համար, և պաշտպանիչ՝ ավելորդ յուղը ներծծող լաթ: (3հատ) 11. Բարձր արագության ուժային արքավորման խնամքի համար նախատեսված սարքավորում: Սարքը ծառայում է նախաստերիլիզացիոն մշակմանը, շարժիչի և ծայրակալների ճնշման տակ յուղման նպատակին, որը զգալիորեն կերկարացնու է ուժային սարքավորման կյանքը: Ամբողջովին համատեղելի է ուժային սարքավորման եւ ծայրակալների հետ: Առաքվում է առանձին փաթեթավորված: (1 հատ) 12. Սարքավորման շարժիչի, մալուխների, ծայրակալների և ծայրադիրների պահպանման և ախտահանման համար նախատեսված արկղ, որը իր մեջ ունի բաղկացուցիչ մասերի համար նախատեսված տեղեր և կափարիչ: (1 հատ) 13. Բորի համար նախատեսված ուղիղ ծայրադիր, համատեղելի է բորերի և շարժիչի հետ, ունի արագ միացման համակարգ: (1 հատ) 14. Բորի համար նախատեսված անկյունային ծայրադիր, համատեղելի է բորերի և շարժիչի հետ, ունի				

		արագ միացման համակարգ: (1 հատ) 15. Կլոր բորեր – 29 հատ, ընդ որում. 15.1. Կլոր բոր, տրամագիծը 1,0 մմ, պատրաստված է բարձրորակ ածխածնի մեծ քանակության պարունակությամբ կարծր պողպատից, առաքվում է ստերիլ: (2 հատ) 15.2. Կլոր բոր, տրամագիծը 1,5 մմ, պատրաստված է բարձրորակ ածխածնի մեծ քանակության պարունակությամբ կարծր պողպատից, առաքվում է ստերիլ: (2 հատ) 15.3. Կլոր բոր, տրամագիծը 2,0 մմ, պատրաստված է բարձրորակ ածխածնի մեծ քանակության պարունակությամբ կարծր պողպատից, առաքվում է ստերիլ: (2 հատ) 15.4. Կլոր բոր, տրամագիծը 2,5 մմ, պատրաստված է բարձրորակ ածխածնի մեծ քանակության պարունակությամբ կարծր պողպատից, առաքվում է ստերիլ: (2 հատ) 15.5. Կլոր բոր, տրամագիծը 3,0 մմ, պատրաստված է բարձրորակ ածխածնի մեծ քանակության պարունակությամբ կարծր պողպատից, առաքվում է ստերիլ: (2 հատ) 15.6. Կլոր բոր, տրամագիծը 4,0 մմ, պատրաստված է բարձրորակ ածխածնի մեծ քանակության պարունակությամբ կարծր պողպատից, առաքվում է ստերիլ: (2 հատ) 15.7. Կլոր բոր, տրամագիծը 5,0 մմ, պատրաստված է բարձրորակ ածխածնի մեծ քանակության պարունակությամբ կարծր պողպատից, առաքվում է ստերիլ: (2 հատ) 15.8. Կլոր բոր, տրամագիծը 6,5 մմ, պատրաստված է բարձրորակ ածխածնի մեծ քանակության պարունակությամբ կարծր պողպատից, առաքվում է ստերիլ: (2 հատ) 15.9. Կլոր բոր, տրամագիծը 8,0 մմ, պատրաստված է բարձրորակ ածխածնի մեծ քանակության պարունակությամբ կարծր պողպատից, առաքվում է ստերիլ: (2 հատ) 15.10. Կլոր բոր, տրամագիծը 1,0 մմ, գլխիկը պատված ադամանդե փոշով, պատրաստված է բարձրորակ ածխածնի մեծ քանակության պարունակությամբ կարծր պողպատից, առաքվում է ստերիլ: (1 հատ) 15.11. Կլոր բոր, տրամագիծը 2,0 մմ, գլխիկը պատված ադամանդե փոշով, պատրաստված է բարձրորակ ածխածնի մեծ քանակության պարունակությամբ կարծր պողպատից, առաքվում է ստերիլ: (2 հատ) 15.12. Կլոր բոր, տրամագիծը 2,5 մմ, գլխիկը պատված ադամանդե փոշով, պատրաստված է բարձրորակ ածխածնի մեծ քանակության պարունակությամբ կարծր պողպատից, առաքվում է ստերիլ: (2 հատ) 15.13. Կլոր բոր, տրամագիծը 3,0 մմ, գլխիկը պատված ադամանդե փոշով, պատրաստված է բարձրորակ ածխածնի մեծ քանակության պարունակությամբ կարծր պողպատից, առաքվու է ստերիլ: (2 հատ) 15.14. Կլոր բոր, տրամագիծը 3,5 մմ, գլխիկը պատված ադամանդե փոշով, պատրաստված է բարձրորակ ածխածնի մեծ քանակության պարունակությամբ կարծր պողպատից, առաքվում է ստերիլ: (2 հատ) 15.15. Կլոր բոր, տրամագիծը 4,0 մմ, գլխիկը պատված ադամանդե փոշով, պատրաստված է բարձրորակ ածխածնի մեծ քանակության պարունակությամբ կարծր պողպատից, առաքվում է ստերիլ: (2 հատ) 16. Ձվաձև գլխիկով բորեր – 4 հատ, ընդ որում. 16.1. Ձվաձև գլխիկով բոր, տրամագիծը 4,0 մմ, գլխիկի երկարությունը 8,0մմ, պատրաստված է բարձրորակ ածխածնի մեծ քանակության պարունակությամբ կարծր պողպատից, առաքվում է ստերիլ: (2 հատ) 16.2. Ձվաձև գլխիկով բոր, տրամագիծը 5,5 մմ, գլխիկի երկարությունը 10,0մմ, պատրաստված է բարձրորակ ածխածնի մեծ քանակության պարունակությամբ կարծր պողպատից, առաքվում է ստերիլ: (2 հատ) 17. Գմբեթաձև գլխիկով բոր, տրամագիծը 5,0 մմ, գլխիկի երկարությունը 6,7 մմ, պատրաստված է բարձրորակ ածխածնի մեծ քանակության պարունակությամբ կարծր պողպատից, առաքվում է ստերիլ: (1 հատ) 18. Կոնաձև գլխիկով բոր, տրամագիծը 4,0 մմ, գլխիկի երկարությունը 9,0 մմ, պատրաստված է բարձրորակ ածխածնի մեծ քանակության պարունակությամբ կարծր պողպատից, առաքվում է ստերիլ: (1				

		հատ) 19. Գանգահատման ծայրադիր իր կցորդիչով: (1 հատ) 20. Գանգահատման ծայրադիրի համար նախատեսված կտրող բորեր: (5 հատ) 21. Գանգածակիչ, ծայրակալով և բորի պաշտպանիչով: (1 հատ) 22. Գանգածակիչի ծակիչ բոր: (3 հատ)				

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

չ/հ	Գնման ենթակա ապրանքի անվանումը	չ/մ	քանակը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	մատակարարումը՝ 2020թ. 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.10.2020թ.
1.	Նյարդավիրաբուժության համար նախատեսված էլեկտրական ուժային ունիվերսալ սարքավորման հավաքածու	լրակազմ	1	24,900,000	24,900,000	1

Ծանոթություն.

Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:

1. Երաշխիքային ժամկետը ՝ ապրանքը պատվիրատուի կողմից ընդունվելու օրվան հաջորդող օրվանից առնվազն 365 օրացուցային օր:
2. Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP, կամ այլ):
3. Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր:
4. Մատակարարման վայր սահմանել ք. Աբովյան, Արզնու խճուղի՝ կենտրոնական բազա :

*թիվ 1.1 և 1.2 կետերով պահանջվող հավաստագրերի պատճենները ներկայացվում են ապրանքների մատկարարման ժամանակ

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ
տնօրեն

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-9/34-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Գնման առարկայի			
չ/h	CPV անվանումը և ապրանքի անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. 4-րդ եռամսյակ ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ., ընդ որում
1.	**Բժշկական այլ գործիքներ և պարագաներ բազմակոմպոնենտ/** Նյարդավիրաբուժության համար նախատեսված էլեկտրական ուժային ունիվերսալ սարքավորման հավաքածու/	33141223/9	24,900,000

* Վճարմանենթակագումարներընեներկայացվածենաճողականկարգով

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ
տնօրեն

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-20-9/34-1 պայմանագրի

Պայմանագրիկողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելուվայրը _____	գտնվելուվայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրիհամարը՝ _____
ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմք ընդունելովպայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը մատակարարելէհետևյալապրանքները՝

N	Մատակարարվածապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրություններկկողմհաստատման համար հիմք հանդիսացածհաշիվապրանքագիրըևդրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-20-9/34-1 պայմանագրի

ԱԿՏ N_____
պայմանագրիարդյունքըԳնորդինհանձնելուփաստըֆիքսելուվերաբերյալ

Սույնով արձանագրվումէ, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդիանվանումը Վաճառողիանվանումը
(այսուհետ՝ Վաճառող)միջև 20 թ. _____ -ին կնքված N_____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն